Արդարադատության
Նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրի «Վաղարշապատ» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի» բառերը:

2. Նախագծի 1-ին հավելվածում անհրաժեշտ է վերանայել կետերի համարակալումը՝ բացառելով լրացուցիչ համարների կիրառումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

3. Նախագծի 1-ին հավելվածի 1.1 կետից անհրաժեշտ է հանել «(եթե սույն հոդվածի 4.1-ին մասով այլ բան սահմանված չէ)» բառերը:

4. Նախագծի 1-ին հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի «օրենքի իմաստով» բառերի փոխարեն անհրաժեշտ է նշել, որ խոսքը «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի մասին է:

ՀՀ ԱՆ իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝

12/26/2023

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ